ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզային բաժին

ք.Իջևան,4001, Երիտասարդական 1, հեռ.060713546

Ելք N 0028870556, 03 նոյեմբերի 2026 թ.

Անդրանիկ Նարիմանի Սարգսյան
Տավուշի մարզ, ԻՋԵՎԱՆ, Պռոշյան փ., 93 տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ
ք.Երևան, Կենտրոն, Գրիգոր Լուսավորիչ 13

ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

30 հոկտեմբերի 2026 թ. **ք.Իջևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Տավուշի մարզային բաժին, հարկադիր կատարող արդարադատության կապիտան Ռուզաննա Գալստյանս ուսումնասիրելով թիվ **10024355** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **12 հունվարի 2023 թ.** տրված թիվ **ԵԴ/32831/17/22** կատարողական թերթի համաձայն պետք է՝ Անդրանիկ Նարիմանի Սարգսյանից «Արդշինբանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 4492285 ՀՀ դրամ և հաշվեգրվելիք տոկոսներ: Գումարների բռնագանձումը տարածել 24.01.2019թ. կնքված թիվ ԳՊ 19/293-61 անշարժ գույքի գրավի պայմանագրի համաձայն գրավադրված Տավուշի մարզ, Իջևան քաղաքի Պռոշյան փողոց 93 բնակելի տուն հասցում գտնվող անշարժ գույքի, ինչպես նաև Անդրանիկ Նարիմանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի այդ թվում դրամական միջոցների վրա:
Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել Հասմիկ Սուրենի Շահվերդյանին պատկանող, գրավի առարկա հանդիսացող Տավուշի մարզ, համայնք Իջևան, Պռոշյան փողոց, 93 բնակելի տան վրա, որն էլ «Արմ Թռասթ» ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 19.400.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

Հասմիկ Սուրենի Շահվերդյանին պատկանող, գրավադրված ներքոհիշյալ գույքը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:

հ/հ	Լոտի անվանումը, նկարագիրը	Գնահատման գինը	Մեկնարկային գինը (75%)	Գույքի քանակը
1	Տավուշի մարզ, համայնք Իջևան, Պռոշյան փողոց, 93 բնակելի տուն, սեփականության վկայական՝ 13122018-11-0010, կադաստրային ծածկագիր՝ 001-0073-0015	19400000	14550000	1

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ սահմանել **01 դեկտեմբեր 2026թ.**:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ Վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:
«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Կատարողական վարույթի վերաբերյալ տեղեկություն կարող եք ստանալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության www.cesa.am պաշտոնական կայքի «Անձնական գրասենյակ» Էլեկտրոնային հարթակի միջոցով:

հարկադիր կատարող՝ Ռ. Գալստյան

ստորագրություն՝